Աբաս թագավորը, այսինքն՝ փոքր Շահ Աբասը այս որ լսեց, կանչեց Բայանդուրին և նրան տվեց Մեծ Թիֆլիս քաղաքի իշխանությունը: Այս եղավ 1099 (1650) թվին:

## ԳԼՈՒԽ ԽԹ
### *ԳՈՐԳԻ ԽԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ*

Երբ Ռոստոմը տեսավ, որ իր որդին մեռավ, և այլ որևէ ժառանգ չունի, որ ժառանգի իր թագավորությունը, կանչեց Բագրատունի տոհմից Վախթանգ անունով մեկին, որդեգրեց նրան և ասաց. «Երբ ես մեռնեմ, դու թագավոր եղիր իմ փոխարեն»:

Եվ քիչ հետո նա մեռավ, իսկ Վախթանգը իր հետ առավ բազմաթիվ ազատորդիներ և գնաց պարսից Սանի Աբաս թագավորի՝ այսինքն փոքր Շահ Աբասի մոտ: Նրանից ընդունելով իշխանությունը՝ անվանվեց Շահնաֆաս, որ նշանակում է արքայի շունչ: Երկար ժամանակ մնաց: Աբասից հետո թագավորեց նրա որդի Սուլեյմանը: Սրա ներկայությամբ չարախոսեցին Շահնաֆասի մասին: Նա ելավ իր կամքով գնաց թագավորի մոտ ապացուցելու իր հավատարմությունը: Նա ուներ բազմաթիվ որդիներ՝ Նազարալի, Գորգի, Պատարա, Բեժո, Լևոն: Առնելով իր Գորգի որդուն գնաց: Երբ մոտեցավ Սպահանին, լսեց, թե այն օրը, որ շահը քեզ տեսնի, կգցի առյուծների առաջ: Այս պատճառով մահացու դեղ ընդունեց և կյանքից զրկվեց: Նրա Գորգի որդուն տարան ցույց տվին թագավորին: Ոմանք սրա մասին ասում են, թե այնտեղ պատանդ էր, ոմանք ասում են՝ իր հետ տարավ Շահնաֆասը, ոմանք ասում են՝ այստեղից գնաց հոր մահից հետո: Սակայն ինչ էլ լինի, Սուլեյման թագավորը տեսնելով նրան՝ նրան հոր տեղը տվեց և մեծ փառքով ուղարկեց Թիֆլիս: Նա եկավ, տիրեց Վրաստանը երկար ժամանակ:

Սուլեյմանից հետո թագավոր նստեց սրա որդի Հուսեինը: Սրա ժամանակ Գորգին ապստամբվեց: Քանզի ասում էին, թե սա ուներ մի չքնաղ ու գեղեցիկ դուստր՝ ազնիվ, աննման: Գորգին բազմաթիվ վրացի աղջիկներ ուղարկեց թագավորին, իսկ սրանք թագավորի մոտ գովեցին նրա դստերը: Շահը մարդ ուղարկեց նրան պահանջելու, իսկ Գորգին իր դստերը չուղարկեց, այլ նաև նախատեց, թե դուք պարսիկներդ սպառեցիք մեր ազգերը՝ ոմանց բռնի, ոմանց խաբեությամբ, ոմանց պատրանքով, ոմանց կեղծավորությամբ: Իմ հայրը մեռավ ձեր պատճառով, խստությամբ (մեզ) հանեցիք հավատից, իմ եղբայրը արգելված էր այդտեղ, իմ դո՞ւստրն էլ եք պահանջում: Արդ՝ ի՞նչ վնաս եք կրել մեզնից, որ այսքան տառապանք եք պատճառում մեզ: Այս և այլ բազմաթիվ նախատինքներ ասաց և իմացավ, որ մեծ արհամարհանք ու նախատինք եղավ շահի համար:

Քանզի շատ չարախոսություններ էին արել նրանից, այս էլ վրան ավելացավ: Կատարյալ թշնամություն առաջացավ, այդ պատճառով իր բոլոր ինչքերը առաքեց Վրաստանի խորքերը, ինքն էլ առնելով իր համախոհներին ու գործակիցներին՝ փախավ ու գնաց, ուր կարողացավ, անտառներում թաքնվեց: Իսկ շահը երբ լսեց նրա փախուստը, մարդ ուղարկեց Խունսար գավառը, որ նշանակում է արյան գլուխ և այնտեղից բերել տվեց Թամրազի Հերակլ թոռին և նրան տվեց Թիֆլիսի խանությունը, նրան անվանեց Վալիխան և մեծաշուք փառքով ուղարկեց Թիֆլիս: Իսկ ինքը հրամայեց զորք հավաքել Գորգու վրա գնալու: Մեծ քանակությամբ զորք հավաքվեց բազմաթիվ տեղերից՝ Երևանից, Նախիջևանից, Գանձակից, Թիֆլիսից և այլ տեղերից, և գնացին Գորգու վրա, իսկ նա թաքնվում էր անտառներում:

Երբ պարսիկները գնում էին նրանց վրա, նրանք մտնում էին անտառը և գիշերը հարձակվում էին զորքերի վրա, կոտորում էին նրանց և ավարում էին ինչքերը: Երբ մահմեդականները վեր էին կենում, նրանք մտնում էին անտառը: Վրացիները ծանոթ էին վայրերին, իսկ նրանք ծանոթ չէին, այդ պատճառով շատ չարիքներ հասցրին մահմեդականներին: Սա ոչ թե մի անգամ և երկիցս եղավ այս, այլ շատ անգամ: Ինչքան նրանք գնացին վրացիների վրա, վրացիք ցերեկը թաքնվում էին, իսկ գիշերը հարձակվում էին նրանց վրա և այն էին անում, ինչ գրեցինք:

Բայց Վրաստանը ավերակ դարձավ, քանզի պարսիկները իրենց գալու ժամանակ ուր հանդիպում էին, կողոպտում էին, ավարում էին ինչքերը, իսկ շեները այրում էին և ասում՝ գնացեք, պատգամեցեք Գորգի խանին, թե այսպես կանենք քո ողջ երկիրը: Իսկ